

ՌՈՒԲԻՆ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

ՖԷՐԴՈՎՍԻՆ ԵՒ ԻՐ ՇԱՀՆԱՄՔՆ

(ՆՆԴԵԱՆ ՀԱԶԱՐԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒԻ)

Ֆէրդովսին, այն բանաստեղծը, որի անունը մեր օրերում ողողել է ամբողջ քաղաքակիրթ աշխարհը, որով իրաւամբ պարծենում է վաղեմի իրանը, ապրում էր 10-11-րդ դարում: Միանդամայն անհիմն է այն պարզունակ պատկերացումը, որի համաձայն Ֆէրդովսին է հիմք գրել պարսից նոր կամ մոռառլմանական պահանութեան: Նրանից առաջ եղել է նախընթաց չքեղ մուսուլմանական գրականութիւն, նրա ժամանակ եղել է բարձր քաղաքակիրթութիւն, որ տւել է առաջնակարգ բանաստեղծներ:


Նրա ծննդեան օրերում իրանի կոյր գուսանը, մեծահոչակ Ռուդաֆին հնչեցնում էր հոչակաւոր դասիդէները և զաղալները, որոնցով նա անմահացաւ պարսից գրականութեան մէջ որպէս նրա մեծ հիմնադիրը, իսկ նրա երիտասարդութեան տարիներում ծաղկում էր նախաֆէրդովսիեան շրջանի երկրորդ մեծ բանաստեղծը՝ Դադիղին, որ ձեռնարկեց շահնամէ կազմելու նոյն հիմունքներով, ինչ որ Ֆէրդովսին, բայց հազիւ հազար երկար դրամ՝ ընկաւ խանդոս թուրք տարփածուի զաշոյնից:

Նրա ժամանակակիցներն էին բանաստեղծների թագաւոր (մայէքօչօարա) Օնսորին, մեծանուն Ֆառուջին, հոչակաւոր Մանուգէրին և ուրիշները:

Նրա ժամանակակից Սամանեան յուսամիտ արքաները հովանաւորներ էին գիտնականների և գրականադէտների, որոնց համար ստեղծել էին մեծամեծ յարմարութիւններ. այսպէս՝ Սամարզանդի հոչակաւոր գրադարանում աշխատում էր հանճարեղ գիտնական Արու Ալի Միևան (Ալիսեննան), իսկ Ֆէրդովսու կեանքի վերջին տարիներում Սոլիթան Մահմուդ Ղազնա-իի արքունիքում խմբւած էին 400 գիտնականներ, գրականագէտներ, բանաստեղծներ, որոնք բարձրը մշակութային աշխատանք էին կատարում:

Այսպիսի մի գարում էր ապրում այն բանաստեղծը, որին վի-

*) Սոյն յօդւածը մի ընդհանուր ակնարկ է Ֆէրդովսու. Եւ նրա Շահնամէի մասին, որ կազմւած է մեր «Ֆէրդովսին և իր Շահնամէ» գրի հիման վրա, որ տպագրում է ներկայում Թէհրանում:



گلستان

ճակւած էր իր հոչակաւոր քերթւածով բանաստեղծների բանաստեղծը դառնալ եւ իրանի փառքը հանդիսանալ:

Ֆէզովսու կեանքը շրջապատած է բազմաթիւ առասպելներով շնորհիւ հետագայ կենսագիրների եւ մեծ աշխատանք էր հարկաւոր դերմանացի մեծանուն գիտնական նէօլդէքէին դտելու եւ մաքրելու նրա կենսագրութիւնը եւ հաւաստի տւեալներ առաջարկելու: Ըստ այդ տւեալների, Ֆէրդովսին եղել է Դեհղան,⁴⁾ հաւանաբար զինւորական. ծնւել է 934 թ. Թոււտում կամ նրա շրջակայքում: Հասուն տարիքում նա միտք է յղացել կամ առաջարկութիւն է ստացել ոտանաւորի վերածել այն արձակ շահնամէն, որ կազմւել էր Թուսում չորս անձանց ձեռքով պահանական խորայ նամակ (արքայադիրք) մատեանի հիման վրա եւ 30-35 տարի ներել է Շահնամէի ստեղծագործման: Այդ ժամանակի մեծագոյն մասը նա աշխատել է նախ քան Սոլթան Մահմուդի արքունիք դալը: ապա եկել է սոլթանի մօտ:

Սոլթան Մահմուդ սորուկ թուրքերի ցեղից ծագած մի նշանաւոր թագաւոր էր, որ կարողացաւ բոլոր ժամանակակից պարսիկ պետութիւնները (Սամանեաններին, Զիարիզներին, Բուրզներին եւ այլն) իր իշխանութեան ենթարկել եւ մի շարք փայլուն յաղթանակների շնորհիւ ստեղծեց մի ընդարձակ պետութիւն, որ Հինդոս գետի ափերից սկսած տարածում էր մինչեւ Խալիֆատի սահմանները, եւ իրեն սոլթան հոչակեց: Այդ թուրք փաղեշահը չէր կարող գուր գալ Ֆէրդովսուն, որ թագւած էր իր երկրի անցեալ փառքի հերոսական յուշերի մէջ, եւ չուտով առաջ եկաւ գժտութիւն. Սոլթանը սպանաց նրան փղի ոտքերի տակ նետել, իսկ նա գրեց իր հոչակաւոր սատիրը (Երզիծարանութիւնը), որտեղ ցուցադրում էր սոլթանի ստոր ծագումը: Տեղի ունեցաւ ծերունազարդ բանաստեղծի փախուստը դէպի Թարարէստան (Մազանդրան), ապա Բուվայհների կամ Բուրզների երկիրը, որտեղ նա գրել է իր երկրորդ մեծ աշխատութիւնը՝ իւսոփ վա Զոլէյլա (Յովակի և Զոլէյլա), իսկ ըստ հետագայ աւանդութեան՝ նաև խալիֆի մօտ: Ինչ եւ իցէ, յայտնի է, որ Ֆէրդովսին խոր ծերութեան մէջ, երեւի ապահով ըզդալով իրեն, վերադարձաւ իր ծննդավայրը, որտեղ եւ մեռաւ: Այն տեղեկութիւնը, որի համաձայն Թուսի մի զարպասով մտնում էին սոլթանի ուղարկած սակով բենաւորւած ուղտերը, իսկ միւս զարպասով գուրս էին տանում բանաստեղծի ամիւնը, մի գեղեցիկ մըտածին աւանդութիւն է եւ ոչ աւելի:

⁴⁾ Այսպէս էին կոչուու խոշոր կալածատերերը, որոնք շնորհիւ իրենց դիրքի գրալւում էին պատմութեամբ:

Շահնամէ - իր Շահնամէն (արքայաէլիսքը) ստեղծելու համար Ֆէրդովսին կանգ առաւ այն չափի վրա, որ ընտրել էր Դաղիլին, այն է մոթազարէր չափը, որ արաբերէնում ունէր հետեւեալ սքեման. —— | —— | —— | —— | —— և որ պարսկերէնում ընդունել էր —— | —— | —— | —— | —— աւելի սոլիդ չափը:

Այդ չափի տակ դրւեց այն հսկայական նիւթը, որ ունէր Ֆէրդովսին իր տրամադրութեան ներքոյ և որից ստացւեց ըստ բանաստեղծի վկայութեան շուրջ 60,000 բէյտ (երկտող) պարունակող մի հսկայ մատեան,*) որ նորագոյն հրատարակութեան մէջ***) բաժնւած է 5 հատորի 2550 էջով: Այս հսկայական նիւթն ամփոփւած է 50 գլխում, որոնցից իւրաքանչիւրը մի թագաւորի տիրապետութիւն է ընդգրկում, բացառութեամբ Արշակունիներին նիւթւած գլմի, որ մի ամբողջ հարստութեան պատմութիւն է ներկայացնում 9 թագաւորով: Այս գլուխները տարբեր մեծութիւն ունեն. այսպէս՝ Քէյ Խոսրովի թագաւորութիւնը ընդգրկում է 13395 երկտող, մինչդեռ, օրինակ, Յաղկերտ Բ. Սասանեանի թագաւորութիւնը 26 երկտող. կան է՛լ աւելի համառօտ գլուխներ. Արշակունիներին նիւթւած գլուխը իր հիմնական մասում ունի միայն 20 երկտող:

Աղբիւրները - Շահնամէի աղբիւրները գալիս են հնագոյն ժամանակներից - «չ միայն հին պարսկական, այլեւ հնդկա-իրանական եւ նոյնիսկ հնդկա-եւրոպական շրջաններից: Ոչ միայն Աւեստայի, այլեւ Խեզզեկայի մէջ մենք դանում ենք Շահնամէի հերոսների նախատիպերին, ինչպէս Յամա իրանական Yima Շահնամէի Զամ կամ Զամշիդ, Traitana-Thraetâona-Փէրէյդուն եւայլն:

Ցոյն հեղինակների մօտ Ֆէրդովսու առասպելները չեն պահւած. կան պատմական առասպելներ, ինչպէս Կիւրոսինը, որ արտաքին նմանութիւն ունեն Շահնամէի առասպելների հետ: Դրա փոխարէն Մովսէս Խորենացին պահէլ է Շահնամէի առասպելներից մի քանիսը Ֆէրդովսուց մի քանի դար առաջ եւ անշուշտ շատ աւելին պահած կը լինէր, եթէ նա, Ալեքսանդրեան ողով դաստիարակւած այդ գիտնականը, օրգանական արհամարհանք չտածէր դէպի այդ առասպելները: Խորենացու յայտնած տեղեկութիւնները վերաբերում են Զահակ («Աժդահակ») իժակիր թագաւորին, նա արտասովոր կեանքի մի քանի հանգամանքներին եւ Ֆէրէյդունին (որին նա հայկական տառապարձութեամբ Հրուդեն է անւանում), որ Զահակին տանում եւ փակում է Դամավանդի անձաւներից մէկում:****) մի ու-

*) Մեզ հասած ձեռագրերում միջին հաշով կայ 55,000 երկտող

**) Հրատ. Խաւարի, Թէհրամ, 1932 թ.

****) Ա. Խորենացի, Ա. գիրք, «Ի պարսից առասպելեաց»:

րիշ տեղեկութիւն վերաբերում է Փահլեւան Ռոստամին, որ նա 120 վղի ոյժ ունէր :*)

Պարսկական հին աւանդութիւնները ձեւակերպւեցին Սասան- և Անների ժամանակ, Խոսրով Անուշիրվանի եւ մանաւանդ Յազկերտ գ. (վերջին) Սասաննանի օրով: Յազկերտի ժամանակ կազմւեց (սահլաւերէն լեզով) Հոչակաւոր Խոթայ Նամակը (արքայագիրքը), որ հիմք ծառայեց Թուսի վերոյիշեալ շահնամէին, որ Ֆէրդովսու աղբիւրը դարձաւ իր շահնամէն հիւսելիս:

Կառուցւածքը - Շահնամէն Իրանի ազգային վէպն է նման Հո- մերոսի անմահ քերթւածներին, Հնդկական Ռամայեանային եւ Մա- հարհարատային, գերմանական Նիբելունգներին, Փիննական Քալեւ- ալային, Փրանսական Ռոլանի Երգին, միայն իր Հսկայական ծառալով աւելի մօտ է կանդնած իր Հնդկական Եղբայրակիցներին:

Նա բնական կերպով բաժանւում է երկու մասի - առասպելա- կան, որ կազմում է աւելի քան 35,000 երկտող, այսինքն երկի եր- կու-երրորդ մասը եւ պատմական: Առասպելական մասն սկսում է թագաւորների պատմութեամբ Փիշդագեան Հարսաութիւնից (Քէօյօ- մարս, Հուշանգ, Թահմուրաս) եւ անցնում է փահլեւանների շրջա- նին (ինչպէս Փիշդագեանների, այնպէս մանաւանդ Քիյանի թագա- ւորների ժամանակ), որոնց մէջ պէտք է տարբերել աւագ փահլե- ւաններ՝ Գարշասպ, Սամ, Կարեն, Զալ, անցման շրջանի փահլե- ւաններ՝ Գուգարզ, Թուս, միջին փահլեւաններ՝ Ռոստամ, Գիլ եւ- այլն, եւ կրտսեր փահլեւաններ՝ Զարիր, Էսֆանդիար եւն.: Պատ- մական շրջանն սկսում է Ալեքսանդր Մակեդոնացուց (Էսկանդա- րից) եւ Արշակունիների վրա մի փոքր կանդ առնելուց յետոյ, անց- նում է Սասաննաններին, որոնցից մի քանիսը՝ Արդաշիր Բարգան, Բահրամ Գուր, Խոսրով Անուշիրվան, Խոսրով Փարվիզ եւ Յազկերտ գ. Երկար զրազեցնում են բանաստեղծին:

Զրադաշտականութիւնը Շահնամէում - Զնայած մահմեդակա- նութեան ամենայաղթ դիրքին, զրադաշտականութիւնը ճնշւած ու խորտակւած չէր: Իսկ Ֆէրդովսու երկում զրադաշտականութեան յատկացւում է սոտնձնապէս պատմաւոր տեղ: Իրանի երկրորդ մէծ փահլեւանը (Ռոստամից յետոյ), Էսֆանդիար, այդ կրօնի պաշտ- պանն է սրով եւ խօսքով: Այդ կրօնի չուրջը առաջանում է Խորին քէն, որ իրար է բաղխեցնում Իրանն ու Թուրանը, որի ըն- թացքում տեղի են ունենում Էսֆանդիարի եւ Զարիրի սիրագոր- ծութիւնները: Շահնամէն (Ճիշտ է, ոչ թէ Ֆէրդովսին, այլ Դաղի- դին), ստիպում է Ռումի, Հնդկաստանի եւ Եմենի թագաւորներին

*) Մ. Խորենացի, Բ. գիրք, Ը.:

ընդունել զրադաշտական կրօնը։ Ֆէր սովորվին նոյնիսկ Քէյ Խոսրովին զրադաշտական է դարձնում։ այս բոլոր հանգամանքները ստիպում են եւրոպական գիտնականներին Ֆէրդովսուն զրադաշտականների շարքը մտցնել կամ գոնէ համարել զրադաշտականութեան երկրպագու, թէպէտ յայտնիէ, որ նա չիս աղանդի կողմակից էր։

Մահմեդականութեան աղիեցութիւնը՝ Մահմեդականութիւնը, որ երեք եւ կէս գար շարունակ խոր արմատներ է ձգել իրանում, չէր կարող չանդրադանալ հեղինակի հոգեբանութեան վրա, որի հետեւանքն էր մի շարք մուսուլմանական երեւոյթների վերադրելը առասպելական դարաշրջանին։

Այդ երեւոյթների մէջ առաջնակարգ տեղ է զրաւում կնոջ նոր ստեղծւած ընկերային գրութիւնը։ կանանց տիպերը ոչ մի գործօն դեր չեն խաղում Շահնամէում եւ զուր կը լինէր այնտեղ փնտուել այնպիսի տիպեր, ինչպէս են Անդրոմաքէ, Պենելոպէ կամ Նաւոիկա։ Բոլոր սակաւաթիւ հերոսուհիները նրա համար են հանդէս գալիս բեմի վրա, որպէսզի անմիջապէս իջնեն վարագոյրի յետեւը կամ երեք չերեւալու պայմանով եւ կամ որպէսզի հետագայում երեւան գան որդուն կամ այլ հարազատին ողբալու համար։ Մի շարք առաքինի կանանց կողքին մենք տեսնում ենք դաժան տիպեր, որոնցից ոմանք հարեւական, ինչպէս Սուլաբէն, որ իր տոփանքի ցանցի մէջ է ուզում սեղմել Սիաւուշին, միւսներն արեւելեան հակումներով, ինչպէս Սինդոփիալը, որ սոսկալի ծեծ է տալիս նամիշտին։

Վէպի գեղարւեստական կողմը։ Որպէսզի ուղիղ գաղափար կազմած լինենք վէպի գեղարւեստական կողմի մասին, պէտք է ի նկատի ունենանք, որ Ֆէրդովսին իր հոկայական նիւթից չափական գեղարւեստական քերթւած է ստեղծել՝ միանդամայն հաւատարիմ մնալով բնագրին։

Վէպի գեղարւեստականութեան նպաստող հանգամանքներն են հերոսական տոնը եւ հայրենասիրական շունչը։ Նա սաւառնում է իր հերոսների մթնոլորտում եւ ապրում է նրանց ապրումներով։ վէպըն ամբողջովին դառնում է ներբողների մի շարք, ձօնւած Շահնամէի հերոսների սիրագործութեանց։ Հին հերոսները եւ բանակները իրար յետեւից յարութիւն են առնում մեր աչքի առաջ եւ բանաստեղծն իրաւունք է ստանում ասելու. «Տառապանքս տեւեց երեսուն տարի, բայց Աջամն»*) իմ երգով կենդանի արի»։

Հերոսների պաշտամունքը թանկ է Ֆէրդովսու համար, բայց կայ նրա համար հերոսներից էլ աւելի թանկ բան եւ այդ հայրե-

*) Աջամ - Պարսկաստամ։

նիքն է : Աւելի մեծ հայրենասէր երեւակայել անկարելի է - իրանի բնակչութեան բոլոր խաւերի մէջ լայն չափերով աղզային գիտակցութիւն մացնողը ֆէրդովսին է :

Իր հերոսական յաղթ խառնւածքին ֆէրդովսին միացնում է անսահման քնքոյշ գծեր . որքա՞ն քնքոյշ են Զոհրաբի զգացմունքները դէպի իր անծանօթ հայրը, որին նա ուզում է թաղաւորեցնել Քէյ Քառուսի տեղ : Իսկ ի՞նչ յուսահատ փայլայանքով է շրջապատում ֆէրդովսին Զոհրաբին, որի վերահաս մահը շողում էր հօր դաշոյնի ցոլքի մէջ :

Հազարաւորներով ևն ֆէրդովսու ընտիր արտայայտութիւնները . բերենք թարգմանաբար մի երկուսը միայն . Իրանի փահեւան Գուդարդը արտայայտում է իր քէնի խորութիւնը դէպի Թուրանի թագաւոր Աֆրասիաբը .

Քէնից ես չեմ փնտրում հանգիստ, քուն անխար,
Ես եմ, Գուրզու, մէյդանն ու Աֆրասիաբ .

Ուստամ իր հոչակաւոր ձիուն, Ռախչին կորցրած (կրկին անդամ), թամբը շալկած զնում է նրան որոնելու . Ֆէրդովսին հեգնորէն նկատում է .

Այսպէս է աշխարհի օրէնքը կոպիտ,

Մերը քամբի մէջ բազմած, մերը քամբը մէջքիդ .

Ուստամ նետահարում եւ սպանում է Թուրանի ահարկու փահեւան Աշկրուսին .

Երբ նա նետը խփեց Աշկրուսի կրծքին,

Երկինի համբոյր տեց հերոսի ձեռքին .

Սուրաբէի գովքից .

Հասակը բարձրակայ, մազերը կամար,

Լեզուն որպէս դաշոյն, շուրբերը շաքար :

Ֆէրդովսու խոչոր հատածների մէջ իր գեղարւեստականութեամբ եւ տիսուր ողբերգական տոնով առաջին տեղը բոնում է Ուստամ եւ Զոհրաբ միջադէպը, այն չքնաղ առասպելը, որ դեռ երկար դարեր արտասուր կը քամէ վշտահար հօր եւ նրա անմեղ չքնաղ զաւակի դալարումները կարդացողի աչքերից : Սա յաւերժական անմեռ գրւածք է, նման Սաւիտրիին, նման Հեկտորի մահւան, նման Զիգֆրիդի առասպելին : Շատ գեղեցիկ, բայց Ուստամ եւ Զոհրաբի կախարդական հմայքը չունեն կսփանդիարի, Սիավուշի, Բիժան եւ Մանիժէի դէպերը եւ որոշ կտորներ Բահրամ Գուրից, մանաւանդ Բահրամ Գուրը եւ Աղաղէն :

Ուագմական հաստածները ընդհանուր առմամբ ազդու են եւ գեղեցիկ, յիշենք Ռոստամի կոփուը Խաղանի, Աշկրուսի, Սպիտակ գելի, մանաւանդ Զոհրաբի հետ:

Տիպերը - Շահնամէին ստեղծել է տիպերի շարաններ, որոնցից մենք մի փոքր կանգ կառնենք միայն երեք ամենանշանաւորների - այսպէս կոչւած ջհան փահլեւանների, այսինքն՝ տիպերական փահլեւանների տիպերի վրա, որոնք են Ռոստամ, Զոհրաբ եւ Էսֆանդիար:

ՌՈՍՏԱՄ - Ռոստամի արտաքին տեսքը սարսուռ ազդող էր, ահա թէ ինչու նրան անւանում էին թահմթան, այսինքն հոկայտմարմին եւ Փիլթան՝ փղամարմին: Մայրը նրան ծնեց չլուած ծանր երկունքի տառապանքներից յետոյ՝ Միմորդ առասպելական թռչունի օգնութեամբ. նրա պապը՝ Սամ փահլեւանը կարգեց նրա համար տաս ծծմայր. մանուկ հասակում նա ուտում էր հինգ մարդու չափ, իսկ երբ մեծացաւ, նրա բաժինն էր սովորաբար ամէն անգամ մի խորոված ցիռ (վայրի էշ). նրա ոյժն այնքան ահուելի էր, որ ըստ Մ. Խորենացու նրան վերագրում էին 120 փղի ոյժ: Քայլելիս նրա ոտները քարերի հետ թաղւում էին գետնի մէջ, եւ նա ստիպւած էր խնդրել Աստծուն ուժի մի մասը վերցնել նրանից. այս է պատճառը, որ նա վստահ գուրս էր գալիս ոչ միայն առիւծների եւ փղերի գէմ, այլև այնպիսի հրէշների, ինչպիսին էր Մազանդրանի դեւերի պետք՝ Սպիտակ դեւը եւայլն: Չնայած իր ամենակարող ուժին, նա անսահման հաւատարիմ էր Իրանի վեհապետներին, բայց երբեմն բռնկում էր եւ գուրս պոռոթկում սրտի ամբողջ զայրոյթը:

Չնայած իր մեծ առաքինութիւններին, նա ունէր եւ մութ կողմէր, որ նկարագրել է Ֆէրդովսին, առանց խնայելու իր փայտայած հերոսին:

ԶՈՀՐԱԲԸՆ - ոսկի գրչի անհման նկարագրութիւն է, մի քնքոյլ էակ, որ լոյս, ջերմութիւն ու սէր է սփուռմ իր շուրջը: Զոհրաբի առաքինութիւնների նկարագրութեան մէջ Ֆէրդովսին մարդկային յարաբերական կարողութեան ամէն սահման անցել է:

ԷՍՖԱՆԴԻԱՐ - Ֆէրդովսու ստեղծած մեծ ջհան փահլեւաններից է, Ռոստամի հզօր ախոյեանը: Նա Գոշթասպ թագաւորի որդին էր. Ռոստամի սէս ունեցաւ իր հափախանը (եօթն արկածները), խորտակեց Արջասպի բանակը, նւաստացրեց Թուրանի թագաւորին և տարածեց զրագաշի կրօնը Իրանի սահմաններից գուրս: Հոչակաւոր է Էսֆանդիարի մենամարտը Ռոստամի հետ եւ նրա եղերական մահը:

Ֆերդովսին Շահնամէում .— Կարիքը եւ կեանքի անհաւասար եւ լեշների ուսումնասիրութիւնը առաջ են բերել վիլխսովիայ բանաստեղծի մէջ յոսետես վերաբերմունք գէպի աշխարհային երեւոյթները . նա անվերջ հնչեցնում է իր «այսպէս է»-ները . օրինակ, «Այսպէս է այս ատպնջական երկրի օրէնքը . երբեմն նազանք ու ժաղցրութիւն, երբեմն ցաւ ու տառապանք» :

Սակայն Ֆերդովսին գուրկ չէ եւ լաւատեսութիւնից . այդ առաջնում է բանաստեղծի այն խոր համոզումից, որ բոլոր ոճրագործները պատժւել են կը պատժւին իրենց դործած յանցանքների համար : Եւ մեկնելով այս ելակէտից՝ նա անվերջ շարժում է իրանի բանակներն ընդդէմ թուրանի, ապա եւ Ռումի, որպէս յանցապարտ պետութիւնների :

Ֆերդովսին մասնաւոր բացասական վերաբերմունք ունի դէպի կանայք, որոնց մասին այն կարծիքին է, որ «երբ սպասւած զաւակը լոյս աշխարհ եկաւ, սիրոը պէտք է կտրել կանանց սիրուց» :

Համեմատութիւն հայկական վէպի հետ .*) Պարսկական վէպի հայկական աղբիւրներին մէնք ծանօթացանք վերը . այժմ մի քանի համեմատութիւններ անենք հայկական եւ պարսկական վէպի մէջ, նկատելով, որ պարսկական վէպի ազդեցութիւնը շատ հաւանական է մեր հին վէպի վրա, բայց այդ ապացուցանելու համար պահանջըւած նիւթը չկայ:

Սիալուշի եւ Քէյ Խոսրովի շարրանդ (գիշերագոյն) ձի նստելը յիշեցնում է հայկական վէպի «Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սիաւն գեղեցիկ» պարբերութիւնը (Մ. Խորենացի, Գիրդ Բ. Գլ. Ծ.) :

Շահնամէում հարիւրաւոր անգամներ խօսում է ոսկի, գոհարեղին եւ մարգարիտ շաղ տալու մասին, որ տեղի էր ունենում յաղթանակների եւ մեծ ուրախութիւնների ժամանակ: Այդ սովորութիւնը կար եւ մեզնում եւ պահւած է մինչեւ մեր օրերը հարսանիքի ժամանակ: Մովսէս Խորենացին այդ առթիւ պահել է մեզ մեր հին վէպի մի սիրուն հասւածը . «Տեղ ոսկի տեղայր ի վիսայութեան Արտաշսի, տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթինկան»: Ահա եւ մի կտոր Շահնամէից . «Այնքան գոհար ցանեցին, որ թագաւորը նրա (գոհարի) մէջ անյարտացաւ» (Գիրդ Բ. Գլ. Ծ.)

Թուսի զարինքաՓըր (ոսկի կօշիկը) յիշեցնում է «կարմիր զգեստ միոյ ստին», որ Արգաւանի մենաշնորհն էր (Գիրդ Բ. Գլ. Խէ.):

Իսկ Զոհակի Դմավանդում փակելլ յիշեցնում է Մասեաց քաջե-

*) Մեր «Ֆերդովսին եւ իր Շահնամէն» գրքում այս համեմատութիւնը կատարած է Յանի յամական եւ մասամբ գերմանական վէպի հետ:

րի Արտաւաղդին այրի մէջ արգելվը (Բ., ԳԼ. կԱ.) : Նման առասպել գոյութիւն ունի եւ վրացիների մօտ Ամիրանի մասին :

Հայկական նոր վէպի մէջ եւս նմանութիւններ կան . թւենք մի երկուսը .

Ոստոտամի եւ Զոհրաբի ձի ընտրելը նման է Դաւթի քուռակընտրելուն :*) - Խանդութ խանումի եւ Դաւթի մենամարտի նմանը ունենք Զոհրաբի եւ Գորդ Աֆարիդի մենամարտի մէջ :

Ոստոտամ եւ Զոհրաբի մենամարտի նմանութիւնը , միայն հակառակ ելքով (զաւակն սպանում է հօրը) , մենք գտնում ենք Դաւթի սպանութեան մէջ , որ տեղի ունեցաւ Զմլկեր սուլթանի ազգկայձեռքով :

Շահնամէի ազդեցութիւնը եւ հրատարակութիւնները . . . Շահնամէի ազդեցութեան տակ եւ նրա հետեւողութեամբ 11-րդ դարից սկսած , առաջացել են մի շարք վէպեր , որոնց հեղինակները նպատակ են ունեցել լրացնելու Ոստոտամի ազդատոհմի մի քանի փահլեւանների գործերը . այսպէս են Գարշասպնամէ , Սամնամէ , Ջհանդիրնամէ , Ֆարամորդնամէ , Բանու-Դաշտապնամէ եւ Բորզունամէ , որոնց միանում է եւ Բահմաննամէ :

Ֆէրդովսու ձեռագրերը բազմաթիւ են , մեծ մասսամբ խնամքով արտադրած եւ նկարագրարդած . Հրատարակութիւնները նոյնպէս բազմաթիւ են . յիշենք գլխաւորները միայն . Թէօներ Մաքան , Կալկաթա , 1829 . մի շարք պարսկական հրատարակութիւններ՝ Բոմբէյ , Թէհրան եւայն : Աւելի կարեւոր են՝ Mohl-ի քննական հրատարակութիւնը (Փրանսերէն թարգմանութեամբ) , չքեղ հրատարակութիւն 1838-78 . Vullers-ի ապա նրա մահից յետոյ Landauer-ի հրատարակութիւնը Liber Regum qui inserbitur Schahname (չվերացած) 1877-1884 :

Թարգմանութիւններից յիշենք կարեւորագոյնները . Փրանսերէն լեզուով՝ յիշածս Mohl-ինը , արձակ թարգմանութիւն , նաև առանձին , 7 հատոր , Le livre des Rois 1876-8: Անգլերէն լեզուով Rogers 551 էջ 1907 թ. և Warner եղբայրների՝ 9 հատոր 1905-15: Իտալերէն լեզուով՝ Rizzoli , Թուրին . 1886 88:

Առանձին հատւածների թարգմանութիւններ բազմաթիւ են զանազան լեզուներով եւ առանձնապէս բազմացւն Ֆէրդովսու հազարամեակի առթիւ :

Հայերէն լեզուով կան Սամ . Գիւլզատեանի թարգմանած Ռուստէմ եւ Զոհրաբ , Սիւտուշ եւ Զոհակ . Գոկտոր Յ . Թիրեաքեանը

*) Սասմայ ծոեր , էջ 29 :

թարգմանել է Արտաշեր Բաբկան։ Հաղարամեակի առկթով նոր թարգմանութիւններ կատարել են ոլ ոլ Թիրեաքեան եւ Յ. Միրզայեան (Հատւածներ)։

Գնահատականը եւ իմիմագնահատականը .— Եթէ համարձակւենք մեր գնահատականը տալ մէրդովուու մասին, կը մնայ ասել, որ նրա տեղը մեծ վիպաղիրների կածառում՝ Հոմերոսի, Վերգելիոսի եւ այլ մեծ վէպերի հեղինակների կողքին է։

Այս բանը չէր կարող չզգալ եւ ինքը, մեծ բանաստեղծը. նա իր բարձր արժանաւորութիւն գիտակցութիւնը հանդէս է բերում Սոլթան Մահմուդի գէմ գրած երդիծարանութիւն հետեւեալ տողերում, որոնք յիշեցնում են Պինդարի, Հորացիոսի եւ Ովեդիոսի քրմական օրններգները։

Փառք հերոսների՝ հզօր, անւանի,
Մէկ մէկ իմ մատեանում կացուցի յայտնի.
Բոլոր մահացածներն այն հնամենի,
Իմ հրաշագործ ձեռքով դարձան կենդանի։
Յիսուսի պէս մէկ մէկ այդ մեռածներին,
Ես կեանի ներշնչեցի գրչով վերստին։
Քեզ մեծ ծառայութիւն մատուցի, արքայ,
Յիշատակդ աշխարհում անմեռ կը մնայ։
Ապարանեներն ամէն կը նսեմանան,
Անձրեւից ու տափից վառ արեգակնան։
Ես գրչով հիմք դրի վեհ ապարանի,
Որ հողմ ու անձրեւից ահ երբեք չունի։
Եւ իմ երկի զլսով դարեր կը դառնան,
Սակայ նիսոհուն մարդիկ այն միշտ կը կարդան։

Եւ իրաւ, այն խանդավառ վերաբերմունքը, որ ցոյց տւեց ամբողջ քաղաքակիրթ աշխարհէր հանդէս մեծ բանասուեղծի յիշատակի նրա ծննդեան հաղարամեակի առթիւ, ոլարդ ցոյց տւեց, որ այնպիսի հաղարամեակներ նրա երկի զլիսով դեռ շատ կը դառնան, սակայն խոհուն մարդիկ այն միշտ կը կարդան։

Թէհրան.

